



## 29. ԲՈՍԻ ՀԵՔԻԱԹԸ

Կըլնի շըլնի էրկու աղբեր. սրանք վեր են կենում ու գնում  
ղարբություն՝ աշխատանք անելու: Սրանց հերը ասել էր, որ ում  
մոտ նոքարություն կանեք, Քոսի մոտ նոքարություն չանեք:

Իրար մանգաղ փոխեցին, այսինքն, եթե նրանցից մեկն ու  
մեկի մանգաղը ժանգոտի՝ իմանա, որ իրա աղբերը մեռել ա: Իրա-  
րից հեռացան էրկու աղբրտինք, մինը ուրիշ ճամփով գնաց, մեկե-  
լը՝ ուրիշ:

Մի աղբերը գնաց, գնաց՝ մի երկիր հասավ:

Մեյդանի մեջ մի Քոսա ոստ էկավ, հարցրեց.

— Աղբեր, ինձ նոքար չե՞ս ըլնի:

Նա էլ փողին թամահություն անելով, ասեց, թե.

— Խի չեմ ըլնի, որ լավ հախ տաս:

Իրար հետ բարշեցին:

Քոսեն ասեց.— Ինչ ասեմ՝ պտի անես, թե որ շարեցիր՝ ես  
քու մեջքից մի զու կաշի հանեմ, թե որ ես քեզ վագեն շթամած  
դուս անեմ՝ դու իմ մեջքից մի զու կաշի հանի:

Անցկացավ մի քանի վախտ. ամեն մարդ իրա հողը վարում  
էր, որ ցանի: Քոսեն իրա նոքարին ասեց, որ գութանը վերցնի ու  
իրա շունը հետը էթա, որտեղ շունը նստի՝ էնտեղ նա վարի: Նա էլ

գութանը օխտը լուծ եզն ու գոմեշ լծեց ու «Հոռովե՛լ-լե՛» ձեն տալով դնացու Շունը սատանի նման գնաց ու մի մենձ լեռ քարի վրա նստոցու նա գութանը քցեց, ինչ արեց՝ չկարաց վարի ու սաղ ջարթրխուրթ արեց, թողեցու Իրիկունը ետ էկավ ու աղին ասեց, թե չկարաց վարի:

Քոսեն ասեց.— Դնա դոմը էնպես սրբի, որ եղ գուա գա:

Նա դնաց էնքան սրբեց, որ կոներն էլ բեզարեց ու եղ չգուա էկավ, Իրա աղին ասեց, որ եղ չի գուա գալի:

Քոսեն էլի ասեց.— Դնա եզների առաջը էնքան դարման ածա, որ զլխները անշախ լրեա: Նա ինչքան դարման էր ածում, եզները զլխները բարձրացնում էին. մախլաս, էլի չկարաց անի ու գնաց Քոսին ասեց, թե.

— Չեմ կարում, աղա՛:

Քոսեն նրան ասեց.— Չունքի ինչ որ ասեցի՝ չկարացիր, արի՛, բու մեջքից մի զու կաշի պտի հանեմ:

էս ասեց ու մեջքից ճիպոտով մի զու կաշի հանեց. էն սհաթը նա մեռավ:

Հիմա սալղ տանք էն մեկել աղբորից:

էն աղբորը մտիկ արեց, տեհավ, որ իրա մանգաղը ժանդոտել ա, ասեց. «Բալի որ իմ աղբորը մի փորձանք ա էլի» ու վեր կացտլ, էկավ սալղով էն երկիրը, որ երկիրը որ գնաց սրա աղբերը ու Քոսի մոտ նոքար էլավ:

Մեյդանի վրա սրան մի Քոսա ուսու էկավ. էս էլի մեր ծանոթ Քոսեն էր. նրան հարցրեց, թե՛ նոքար չես ընի, նա ասեց՝ խի չեմ ընի: Նրան Քոսեն ասարավ իրա տունը նոքարու Քոսեն էլի նրա հետ բարեց, որ ինչ ասի՝ պտի անի, թե որ չարեց՝ նրա մեջքից մի զու կաշի կհանի:

Վար ու ցանքի վախտը հենց որ էկավ Քոսեն իրա նոքարին ասեց.

— Դութանը լծի ու դնա հանդը, մեր ֆողը վարի. կընի որ մեր ֆողը շիմանաս, իմ շունը հետդ գա, որտեղ նստեց, էն ա՛ խմացիր:

Մեր Քոսի նոքարն ա, գութանը լծեց, ջունն էլ հտեից քցեց, ունաց, Շունը ոնց որ սովորցրած էր, գնաց ու մենձ քարի վրա նստեց. նրա ճարը կտրեց, քարով տվեց ջանը սպանեց ու ինքը

փափուկ տեղ վարեց, իրիկունը տուն էկավ, իրա աղին ասեց, որ վարել, պրծել ա:

Քոսեն ասեց.— էդ մինը որ լավ արիր, դե հիմա գնա մեր գոմը ընենց թամուզ սրբի, որ եղ դուա գա:

Նա ավելը վեր կալավ քիչ դես քստացրեց, քիչ դեն քստացրեց, գնաց Քոսի ըղղնեքով եղը բերեց շուռ տվեց գոմը ու գնաց Քոսին ասեց, որ գոմը հրես թամուզ հազիր ա:

Գնաց, ինչ տենա՝ ղորթ որ սաղ գոմը եղ ա: էն սհաթը ֆահմեց, որ իրանց եղն ա: Քոսեն իրիկունը ասեց.

— Գնա եզնեքի առաջը էնքան դարման ածա, որ գլխները դարմանի տակ մնա խրված:

Նա էլ գնաց ինչքան եզ կա, քոմրքոնց գլխները կտրեց, կոխեց դարմանի մեջ ու գնաց իմաց տվեց իրա աղին, որ նրա հրամանը կատարել ա: էկավ Քոսեն, ինչ տենա՝ մազերը մամարի նման գլխին բիզ-բիզ կանգնեց: Քոսեն մտածեց, որ իրա նոքարը իրան հաղթեց, պտի մի գհով սրա ձեռից պրծնի:

էն գշերը Քոսեն իրա կնկանը ասեց.— Ա՛յ կնիկ, գլխիդ ճար ունես՝ տե՛ս, առավոտը մեր նոքարը իմ մեջքից մի զուլ կաշի պտի հանի, թե՛զ, մի քանի հատ գաթա թխա, որ վեր կենանք ու փախչենք սրա ձեռից, թե չէ րաններս բուրդ ա:

Քոսի կնիկը էն գշեր գաթա թխեց, ածեց ղութիկը, որ էն-բաշտեն հազիր ըլնի, որ փախչեն: էս բանը Քոսի նոքարը իմանում ա. նրանցից թաքուն գնում ա մտնում գաթի ղութիկը ու գաթեքը վրեն ածում: էն բաշտեն Քոսեն գաթի ղութիկը շալակում ա ու իրա կնկա հետ փախչում ա:

Մարդ ու կնիկ գնացին ու մի գեղ հասան: Ըստեղ շները վրա տվին. Քոսեն ասեց.

— Հա՛յ գիտի, մեր նոքարն ըստեղ ըլներ, սրանց շանց կտար: Նա էն սհաթը ղութիկից գլուխը հանեց ու ձեն տվեց.

— Ծս ըստեղ եմ, ըստեղ Քոսա, դարդ մի անի:

Մարդ ու կնիկ մնացին զարմացած. համա նրանց ձեռներին ինչ կար: Իրար հետ երեքով գնացին ու մի գետի գրագին վեր էկան. էն գշեր ընտող քնեցին: Մարդ ու կնիկ իրար մոտ էին քնել, իրանց նոքարի հմար տեղ իրանց ոտների մոտ էին քցել, շունքի Քոսեն մտածել էր, որ գիշերվա մի վախտ քացով տա, քցի շուրր: Նա էս բանը թեզ ֆահմեց: Գշերը, երբ մարդ ու կնիկ քնել էին, ինքը գնաց

Քոսի մոտ քնեց ու նրա կնկանը բերեց դրեց նրա ոտների մոտ:  
Քոսեն գշերվա մի վախտ վեր կացավ ու հենց իմացավ նոքարն  
ս՝ քացով տվեց ու քցեց գետու:

Առավոտը Քոսեն ուրախ-ուրախ տեղից վե կացավ, տեհավ  
իրա կնիկը շկա ու իրանց նոքարը իրա մոտ քնած ա: Քոսեն նախ  
խելքի ընկավ նրա արած սատանուիջունը: Նոր էլ ո՞րտեղ:

Քոսեն ու իրա նոքարը իրար հետ ըստեղ բարշեցին, նա իրա  
հախը առավ ու գնաց իրա երկիրը:

